«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և նախաձեռնության զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում (Ա. Բակունցի ,,Ալպիական մանուշակ,, պատմվածքի օրինակով)

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Զվարթ Սահակյան

Ուսումնական հաստատություն՝ ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց

Երևան 202

Բովանդակություն

Ներածություն……..3

Գլուխ առաջին. Սովորողների ինքնուրույնության զարգացման դրսևորումները ,,Ալպիական մանուշակ,, պատմվածքում..... 5

Ա) Սովորողների ինքնուրույն մոտեցումները ,,Ալպիական մանուշակ,, պատմվածքի հանդեպ……. 6

Բ) Սովորողների ինքնուրույնությունը ,,Ալպիական մանուշակ,,-ում բնության նկարագրությունների հանդեպ …….. 7

Գլուխ երկրորդ. Սովորողների ստեղծագործական ունակությունների բացահայտումը ,,Ալպիական մանուշակ,,-ում ……. 10

Ա) Սովորողների ստեղծագործական վերաբերմունքը պատմվածքի կերպարների հանդեպ…….10

Բ) Պատմվածքի սկզբի և ավարտի շարադրանքը սովորողների ստեղծագործական հայացքով.....12

Գլուխ երրորդ. Նախաձեռնություն դրսևորելու սովորողների կարողությունները ,,Ալպիական մանուշակ,, պատմվածքի դասավանդման ժամանակ……..15

Եզրակացություններ…….18

Ներածություն

Երեխան դպրոցում ոչ թե սերտել պետք է սովորի, այլ ապրել ու զգալ

Արա Աթայան

Մանկավարժական գործունեության տարիներին իմ ուշադրության կենտրոնում մշտապես եղել է սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում: Ուսումնական տարում սովորողներին տրվող առաջադրանքները ցույց տվեցին, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնց դեպքում նրանք բացահայտում են իրենց ստեղծագործական ունակությունները[1], ինքնուրույն մոտեցումը[2], հարկ եղած դեպքում հանդես են գալիս նախաձեռնությամբ[3]: Բայց դրան հասնելու համար ուսուցիչն ինքը նույնպես պետք է հանդես բերի ստեղծագործական մոտեցում, քաջատեղյակ լինի իր աշակերտների հնարավորություններին: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել հիշյալ հմտությունները զարգացնելու շնորհիվ:

Նպատակը: Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է Ակսել Բակունցի ,,Ալպիական մանուշակ,, պատմվածքի օրինակով սովորողների մեջ զարգացնել նրանց

---

[1] Այս մասին տես **Սահակյան Լ., Նավասարդյան Հ.,** Սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորման դիդակտիկական և հոգեբանական տեսանկյունները, Եր., ,,Մանկավարժական միտք,,, 2011, N 1-2, էջ 7-16:

[2] Տես **Պապոյան Վ., Գալստյան Ա., Սարգսյան Դ., Մուրադյան Ե.,** Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում, մեթոդական ուղեցույց, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 78 էջ, **Սարգսյան Ս.,** Ուսուցչի դերը սովորողների ինքնուրույն ուսումնառության մեջ, https://forum.armedu.am/forum/

[3] ,,Աշակերտների նախաձեռնողականության շնորհիվ այսօր դպրոցը նոր գրադարան ունի,,, www.teachforarmenia.org/news-page/stepanavan-library

ստեղծագործական ունակությունները, նպաստել, որ պատմվածքի կոնկրետ հատվածների հիմքի վրա ի հայտ գան սեփական դատողությունները, ինքնուրույն մոտեցումները, ընդլայնվեն նրանց նախաձեռնողական կարողությունները:

Խնդիրները: Աշխատանքի երեք գլուխներում իմ կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Սովորողների մեջ վեր հանել աշակերտների ինքնուրույն մոտեցումները պատմվածքի մասին ընդհանրապես,
2. Սևեռել նրանց ուշադրությունը բնության նկարագրությունների վրա և ինքնատիպ վերլուծություններով ի ցույց դնել դրանք,
3. Տարբեր հարցերի օգնությամբ ձևավորել ստեղծագործական վերաբերմունք պատմվածքի կերպարների հանդեպ,
4. Սովորողների ստեղծագործական ունակությունները խթանելու նպատակով կանգ առնել պատմվածքի սկզբի և ավարտի շարադրանքի վրա,
5. Առանձնակի ուշադրություն դարձնել սովորողների նախաձեռնությամբ ,,Ալպիական մանուշակը,, գրական միջոցառման նյութ դարձնելու խնդրին (պատրաստել սցենար, կազմակերպել թատերական ներկայացում, պատրաստել նկարներ, պլակատներ և այլն):

   Հետազոտական աշխատանքը բաղկացած է երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, որոնցում քննական շարադրանքով ներկայացրել ենք ,,Ալպիական մանուշակի,, օրինակով սովորողների մեջ ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և նախաձեռնության զարգացման սեփական փորձը, դիտարկումներն ու նկատառումները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ „ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ„ ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

Հայ գրականության դասավանդման տարիների իմ փորձը ցույց է տալիս, որ հայ դասականների՝ ծրագրում ներառված ստեղծագործությունները լայն հնարավորություններ են ընձեռում սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական ունակությունները, նախաձեռնողականությունը լավագույնս բացահայտելու համար: „Ալպիական մանուշակի [4] „ օրինակով ես կփորձեմ առանձնաբար անդրադառնալ սովորողների մեջ այս երեք կարևորագույն հատկանիշները վեր հանելու և զարգացնելու սեփական փորձին:

Մինչ կոնկրետ պատմվածքին հանգամանորեն անդրադառնալը սովորողներին հանձնարարում եմ ընթերցել պատմվածքը (ցանկալի է՝ մեկից ավելի անգամներ), ես նույնպես նախապատրաստվում եմ և առաջին դասի սկզբնական հատվածի համար ներառում մի քանի ընդհանրական հարցեր, մասնավորապես՝ Բակունցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, ում է նվիրված պատմվածքը, ինչ գաղափարներ են արծարծվում նրանում, ինչ ժանրային առանձնահատկություններ ունի և այլն: Այնուհետև անցնում եմ սովորողների ինքնուրույն հայացքները, մոտեցումները ակտիվացնելու իմ կողմից նախապես պլանավորված խնդիրների իրականացմանը:

[4] http://aybuben.com/axel-bakunts-2

Ա) Սովորողների ինքնուրույն մոտեցումները ,,Ալպիական մանուշակ,, պատմվածքի հանդեպ

Պատմվածքի նկատմամբ որոշակի վերաբերմունք ձևավորելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ակտիվացնել սովորողների մեջ ինքնուրույն մոտեցման գործոնը: Իմ առաջին հարցը նրանց հետևյալն է. ,,Ընթերցումից հետո ի՞նչ տպավորություն եք ստացել պատմվածքից, և եթե դուք լինեիք հեղինակը, կփորձեի՞ք մի կողմ դնել այս տարբերակը և նորից գրել այն,,:

Աշակերտների պատասխանները տարբեր են լինում: Այդ պատասխանները ես սովորաբար համակարգում եմ երեք խմբի մեջ: Առաջինները գտնում են, որ իրենք, ակտիվ խառնվածքի տեր լինելով, առանձնապես համակրանք չունեն քնարական պատմվածքի հանդեպ: Երկրորդ խմբի անդամները խոստովանում են, որ իրենց դուր է եկել պատմվածքը և այն կթողնեին նույն սյուժեով, բայց փոփոխություններ կանեին ներսում: Երրորդ խմբի որոշ ,,համարձակներ,, էլ կարծում են, որ իրենք ամբողջությամբ կփոխեին պատմվածքը: Ինձ հատկապես հետաքրքրում է վերջին խմբի պատասխանը, և ես նրանց մեջ առավել ինքնուրույն մտածողներին հանձնարարում եմ հաջորդ դասին ներկայացնել ,,Ալպիական մանուշակ,, թեմայով պատմվածքի նախնական պլան կամ սցենար:

Հաջորդ հարցս. ,,Ինչպե՞ս եք գնահատում ,,Ալպիական մանուշակը,, ձեզ հայտնի պատմվածքների շարքում,,:

Պատասխանները կրկին տարբեր են լինում: Առաջին խումբը գտնում է, որ ,,Ալպիական մանուշակը,, կարելի է դասել իրենց կարդացած պատմվածքների միջնամասում, ըստ երկրորդ խմբի՝ ,,Ալպիական...,,-ը պատմվածքների մեջ լավագույնն է, իսկ երրորդ խումբը առաջին տեղում կդասեր, եթե այն իրենց սեփական շարադրանքով ներկայացվեր:

Երրորդ հարցս. ,,Եթե համեմատելու լինեիք Բակունցի երկու պատմվածքները՝ ,,Ալպիական մանուշակը,, և ,,Միրհավը,,, նրանց մեջ ի՞նչ ընդհանուր գծեր կառանձնացնեիք,,:

Առաջին խմբի անդամները առանձնացնում են մասնավորապես երկու պատմվածքներին բնորոշ քնարականությունը, բնության քնարական նկարագրությունները: Երկրորդ խումբն ընդգծում է հեղինակի անտեսանելի ներկայությունը երկու պատմվածքներում էլ, Բակունցի կողմից մի շարք խորհրդանիշների կիրառությունը (ալպիական մանուշակ, միրհավ): Երրորդ խումբը կանգ է առնում այն իրողության վրա, որ երկու պատմվածքներն էլ տխուր ավարտ են ունենում:

Սովորողներին տրվող այս և մի շարք այլ հարցեր հնարավորություն են տալիս ինքնուրույն մոտեցում դրսևորելու պատմվածքի նկատմամբ, ճշտելու նրա հանդեպ իրենց ընդհանրական վերաբերմունքն ու տպավորությունները, որից հետո արդեն կարելի է անդրադառնալ ,,Ալպիական մանուշակի,, կոնկրետ հատվածներին և դասը շարունակել այս ուղղությամբ:

Բ) Սովորողների ինքնուրույնությունը ,,Ալպիական մանուշակ,,-ում բնության նկարագրությունների հանդեպ

Բնության ներկայությունը ,,Ալպիական մանուշակ,,-ում բավականին ընդգծված է, այն մեծապես օգնում է Բակունցին, որ կերտի մի ուրույն և ինքնատիպ աշխարհ: Դասավանդման ընթացքում ես կարևորում եմ այս իրողությունը և սովորողների ուշադրությունը կենտրոնացնում բնության նկարագրությունների վրա:

Իմ առաջին հարցը հետևյալն է. ,,Ինչո՞վ են պայմանավորված բնության առատ նկարագրությունները ,,Ալպիական…,,-ում:

Դասարանի աշակերտներին դարձյալ բաժանում եմ երեք խմբի և նրանց կարծիքները խմբավորում: Առաջին խմբի անդամները մեծ մասամբ այն կարծիքին են, որ բնության նկարագրությունները որոշիչ դեր են խաղում պատմվածքի մեջ: Առանց այդ նկարագրությունների Բակունցը չէր կարողանա բացահայտել իր հերոսների ներաշխարհը: Երկրորդ խումբը առավել շատ կենտրոնանում է այդ նկարագրությունների անձնավորված լինելու վրա: Դրան օգնում են հեղինակի կողմից բնության անձնավորման օրինակները (Բասուտա գետի սպիտակ փրփուրների տակ հազարավոր գամփռների ոռնոցը, գունավոր բզեզի ճոճքը մանուշակի ծաղկափոշու մեջ և այլն): Երրորդ խումբը գտնում է, որ բնության նկարագրությունները և պատմվածքի հերոսների բնավորության մի շարք կողմեր բավականին նմանություններ ունեն, իսկ մի շարք դեպքերում խիստ ներդաշնակ են:

Երկրորդ հարցս. ,,Պատմվածքի հատկապես որ հատվածում է բնության նկարագրությունների ազդեցությունը նկատելի,,:

Առաջին խումբը կարծում է, որ ազդեցիկ են հատկապես պատմվածքի առաջին նախադասությունները, որովհետև նրանք ընթերցողին նախապատրաստում են դեպքերի ու սյուժեի հետաքրքիր զարգացման, որը պետք է աստիճանաբար բացահայտվի հետագա գործողություններում. ,,Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը: Հեռվից ավերակներ չեն երևում և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, զոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին,,[5]:

Երկրորդ և երրորդ խմբերին առանձնապես հետաքրքրում է ալպիական մանուշակի երևույթը: Երկրորդ խումբը առանձնացնում է հետևյալ հատվածը. ,,Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն

[5] http://aybuben.com/axel-bakunts-2

բուրաստան,,[6]: Երկրորդ խմբի անդամները բացատրում են, որ իրականում մարդկային կյանքը բոլորովին էլ այդ ծիրանագույն բուրաստանը չէ, և գրողը հետագայում ստեղծելու է նաև բնության հակապատկերը մարդկային իրականության մեջ: Երրորդ խմբի կարծիքը նույնպես ինքնատիպ է: Նրանք գտնում են, որ ալպիական մանուշակի նկարագրությունները խորհրդանշում են մերթ նրբություն ու քնքշություն, մերթ կորուսյալ, մերթ էլ՝ մշտնջենական գեղեցկություն: Մանուշակն ու նրա գույնը զուգորդվում են պատմվածքի հերոսներին ու նրանց ապրումներին: Այսպես՝ մանուշակագույն էին այն կնոջ՝ ծովափի գեղեցկուհու աչքերը, ,,ծովն ասես ափ էր շպրտում ալպիական ծիրանագույն մանուշակներ,,, իսկ նկարչի քաղած և ծոցատետրում զետեղած մանուշակը և կարոտ է, և խռովք, և սփոփանք:

Այսպիսի երկխոսությունների շնորհիվ ինձ հաջողվում է սովորողների մեջ բացահայտել նրանց ինքնուրույն մոտեցումների մի շարք ուշագրավ կողմեր:

[6] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ „ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ„-ՈՒՄ

Սովորողների ստեղծագործական կարողությունները բացահայտելու նպատակով ես փորձում եմ կենտրոնանալ մասնավորապես նրանց երևակայության վրա: Այդ իսկ պատճառով հարցերս ձևակերպում եմ այնպես, որ նրանք այս դեպքում հեղինակային որոշակի դերի մեջ մտնեն և սեփական երևակայությամբ մուտք գործեն պատմվածքի հերոսների, ապա նաև սյուժեի վերաձևակերպման նոր աշխարհ, սեփական բառերով ու երևակայությամբ վերաշարադրեն պատմվածքի մի քանի հատվածներ, պատմաբանի, նկարչի, հնձվորի գործողությունները նկարագրեն նոր տարբերակներով:

Ա) Սովորողների ստեղծագործական վերաբերմունքը պատմվածքի կերպարների հանդեպ

Խնդիրն իրագործելու նպատակով նախ փորձում եմ սովորողների հիշողության մեջ ամրակայել պատմվածքի հերոսների գործողություններին առնչվող մի քանի կարևոր դրվագներ;

Պատմաբանը, որ առաջին ձիավորն է, շարունակ հետաքրքրվում է տվյալ տարածքի պատմությամբ: Ուստի աշակերտներին հանձնարարում եմ կարդալ նրան առնչվող հատվածը.,,Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մասին, երբ զրահապատ ձիերի սմբակները դոփում էին երկաթյա մուտքի առաջ և ավերից դարձող նրա համհարզները ճոճում էին նիզակները,,[7]:

[7] Նույն տեղում:

Առաջին հարցս ձևակերպում եմ հետևյալ կերպ. ,,Դուք պատմվածքի մերօրյա հեղինակն եք: Համաձա՞յն եք արդյոք Բակունցի կողմից պատմաբանի նմանատիպ ներկայացմանը, թե այլ կերպ կփորձեիք պատկերել նրա կերպարը,,:

Սովորողների զգալի մասը հիմնականում համամիտ է կերպարակերտման այս ձևին, իսկ ոմանք, որոնց ստեղծագործական ունակություններն ավելի ընդգծված են, առաջարկում են պատմաբանի սեփական կերպարը: Մեջբերեմ նրանցից մեկի մոտեցումը:Նա առաջարկում է պատմաբանի հետ կապված՝ մի փոքր նախապատմություն տալ՝ ինչ դրդապատճառներ կային այստեղ գալու, ընդլայնել պատմաբանի հետաքրքրությունների սահմանները, նրա կերպարին ավելի աշխուժություն հաղորդել:

Պատմվածքի հաջորդ ուղևորը **նկարիչն է**, որն այլ կերպ է նայում բնությանն ու մարդկանց. ,,Ֆետրե գլխարկով երկրորդ ձիավորը Կաքավաբերդի գլխին հնություններ չէր որոնում: Նրա ամբողջ հարստությունը ծոցի հաստ տետրն էր և սրածայր մատիտը: Հերիք էր աչքն ընկներ մի դեմքի, տեսներ գեղեցիկ մի անկյուն, մամռապատ մի քար, որպեսզի թղթի վրա մատիտով նկարեր այն, ինչ տեսել էին նրա աչքերը,,[8]:

Նկարչի առնչությամբ իմ առաջարկած նույն հարցին սովորողների պատասխանները նույնպես հետաքրքիր ու ինքնատիպ են: Մասնավորապես նրանցից մեկը կարծում է, որ երկխոսությունները քիչ են, և եթե ինքը լիներ հեղինակը, ապա կներկայացներ նկարչի ու հնձվորի կնոջ միջև փոքրիկ մի երկխոսություն, որից էլ ավելի կջերմանար նկարչի հուզական աշխարհը: Նույնպիսի երկխոսություն կարելի էր ներկայացնել նկարչի ու պատմաբանի միջև:

Այնուհետև անցնում եմ **հնձվորի** և նրա **կնոջ** կերպարներին: Հնձվորը. ,,Հնձվորը միտք արեց, ուսը քորեց և դարձավ դեպի ձորը՝ հնձելու կորեկի արտը: …Ինչ կլիներ, եթե ինքը գտներ գանձը: Քանի անգամ է նա նստել հենց այն քարի վրա, որ տեղահան

[8] Նույն տեղում:

արեց ակնոցավորը: Եթե իմանար, ապա գանձերը կլինեին նրա արխալուղի գրպանում: Քանի կով կառներ…,,[9]:

Հնձվորի կինը. „Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները, թվում էր քրմուհի՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող,,[10]:

Հնձվորի կերպարի կապակցությամբ իմ առաջարկած նույն հարցին սովորողների մի մասի ,,հեղինակային,, մոտեցումները նույնպես հետաքրքիր են: Օրինակ՝ նրանցից մեկը կարծում է, որ կարելի էր հանդիպեցնել հնձվորին ու եկվորներին, պատմվածք ներբերել նրանց միջև կայացած զրույցի մի դրվագ, որից հետո և հնձվորի, և նրա կնոջ կերպարներին արդեն ուրիշ գույներ կխառնվեին:

Բ) Պատմվածքի սկզբի և ավարտի շարադրանքը սովորողների ստեղծագործական հայացքով

Սովորողների ստեղծագործական ունակությունների դրսևորման հարցում կարևոր եմ համարում նաև նրանց կողմից ,,Ալպիական մանուշակի,, սկիզբն ու ավարտը հատկանշող հատվածների նորովի շարադրանքը: Ուստի դասի ընթացքում իմ տված հարցերից երկուսը առնչվում են դրանց:

Առաջին հարցս. ,,Եթե դուք լինեիք Բակունցի փոխարեն, ինչպե՞ս կսկսեիք պատմվածքը,,:

Աշակերտները սովորաբար նման դեպքերում աշխուժանում են, առաջարկում հետաքրքիր տարբերակներ, թեև դրանք ավելի շատ ստեղծագործական երևակայության արդյունք են: Նշենք մի քանիսի առաջարկությունները:

[9] Նույն տեղում;
[10] Նույն տեղում:

Աշակերտներից մեկը առաջարկում է պատմվածքն սկսել հնձվորի և նրա կնոջ վրանային կյանքի նկարագրությամբ: Այդ վրանին են մոտենում եկվորները, որոնք, մի փոքր հանգստանալով այնտեղ, շարունակում են իրենց ճանապարհը դեպի Կաքավաբերդ: Ըստ այդմ, առաջարկողի կարծիքով, պատմվածքի սյուժեն նոր ուղղություն կարող է ձեռք բերել:

Մյուսը առաջարկում է պատմվածքը սկսել նկարչի և ծովափին նրան հանդիպած կնոջ սիրավեպով: Դրա շնորհիվ ծովափնյա կյանքի և գյուղական աշխարհի հակադրության նկարագրությունը ավելի գունեղ երանգներ կարող էր ստանալ:

Մեկ այլ աշակերտ առաջարկում է պատմվածքը սկսել պատմաբանի և նկարչի երկխոսություն-զրույցով: Նման տարբերակի դեպքում հեղինակի ներկայությունը կպակասեր, փոխարենն ավելի կաշխուժանային ու անմիջական կդառնային նշված կերպարները:

Սովորողները հետաքրքիր գաղափարներ են առաջարկում նաև ,,Ալպիական մանուշակի,, ավարտի հետ կապված: Մասնավորապես՝ աշակերտներից մեկի կարծիքով՝ ինքը նման տխուր ավարտ չէր հաղորդի պատմվածքին, այլ վերջում կհանդիպեցներ պատմաբանին, նկարչին և հնձվորին: Յուրաքանչյուրը կխոսեր իրեն հուզող հարցերի շուրջ, և կբաժանվեին հայրենի բնաշխարհի մասին անմոռանալի տպավորություններով:

Մեկ ուրիշ սովորող նշում է, որ ինքը պատմվածքը կավարտեր փոքրիկ տղայի կերպարն ավելի ամբողջական դարձնելով: Նա տեսնում է նկարչին ու պատմաբանին, հիանում նրանց գործողություններով, ապա ականատես է դառնում հոր դաժանությանը և վերջում երազում է ճամփորդել ու գտնել նոր աշխարհներ և այնտեղ տանել ու երջանկացնել իր մորը:

Այս և նմանատիպ հարցերն ու պատասխանները զգալիորեն ակտիվացնում են սովորողների ստեղծագործական ունակությունները, մեծացնում պատմվածքի և նրա մեջ տեղի ունեցող գործողությունների հանդեպ ուշադրությունն ու հետաքրքրությունը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԴՐՍԵՎՈՐԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ „ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ„ ՊԱՏՄՎԱԾՔԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Սովորողների հետ անմիջական, կենդանի հաղորդակցությունը շարունակվում է: Այս անգամ դասի ընթացքում ուշադրությունս կենտրոնացնում եմ նրանց կողմից պատմվածքի հանդեպ նախաձեռնություն ի հայտ բերելու կարողությունների վրա: Նախ՝ հարցնում եմ, թե նրանք ինչպիսի նախաձեռնություններով կուզենային հանդես գալ, որպեսզի Բակունցի այս հրաշալի ստեղծագործությունը ավելի հայտնի դառնա հայ ընթերցողների, հանդիսատեսների և ընդհանրապես գրականությամբ հետաքրքրվողների շրջանում: Նրանց հետ մի փոքր խորհրդակցելուց և տարբեր առաջարկներ լսելուց հետո ընդհանրացնում և համակարգում եմ դրանք հետևյալ կետերի շուրջ.

ա/ Առավել համարձակները իմ ղեկավարությամբ պատրաստակամություն են հայտնում „Ալպիական մանուշակը„ դարձնել սցենար:

բ/Սովորողների մի խումբ համաձայնում է թատերական ներկայացումի վերածել այդ սցենարը:

գ/ Աշակերտների մյուս մասը մտածում է ստեղծել պատմվածքի թեմայով նկարներ, պլակատներ, որոնք կարելի է կիրառել բեմականացման ընթացքում:

Թեև „Ալպիական մանուշակին„ հատկացված երկու դասաժամն ավարտվում է, սակայն աշակերտների մտահղացումներն ու նախաձեռնությունները կյանքի կոչելու նպատակով համատեղ որոշում ենք երկու-երեք շաբաթ հետո կազմակերպել համադպրոցական միջոցառում: Դասերին զուգահեռ շարունակում եմ

արտադասարանական հանդիպումները աշակերտներիս հետ. կարդում ենք սցենարի նախնական տարբերակը, շտկումներ և ուղղումներ անում: Սովորաբար սցենարը նույնությամբ չի կրկնում պատմվածքի սյուժեն: Այստեղ ես հնարավորություն եմ տալիս աշակերտներին կրկին ինքնուրույնություն դրսևորելու և իրենց ստեղծագործական ունակությունները, երևակայությունը մեկ անգամ ևս ի ցույց դնելու:

Թատերական ներկայացումն ինքնին ենթադրում է երկխոսությունների առատություն, ուստի նախ հաստատում ենք հերոսների ցանկը՝ հեղինակը, պատմաբանը, նկարիչը, ուղեկցողը, հնձվորը, նրա կինը, երեխան: Գյուղի վրանային կյանքն ավելի իրական դարձնելու համար ներառում ենք նաև վրաններում ապրող մի քանի այլ ընտանիքներ, Կաքավաբերդ մտած մի քանի զբոսաշրջիկներ: Երկխոսությունները կառուցվում են՝ ելնելով պատմվածքի սյուժեի բովանդակության առանցքային փուլերից: Այսպես՝ հեղինակը ներկայացնում է իր հերոսներին, այնուհետև զրույց-երկխոսություններ են տեղի ունենում պատմաբանի ու նկարչի, պատմաբանի, նկարչի և ուղեկցողի, հնձվորի և իր կնոջ, հնձվորի ու երեխայի միջև և այլն: Կարևոր են նաև հեղինակի մենախոսությունները, հերոսներին ներկայացնելու գեղարվեստական հնարանքները, ինչպես նաև առանձին հատվածներում պատմաբանի, նկարչի, ուղեկցողի, հնձվորի, նրա կնոջ մենախոսությունները, որոնք ավելի գունեղ են դարձնում սյուժեն, հայրենի բնաշխարհն ու նրա նկարագրությունները:

Ներկայացմանը պատրաստվելու ընթացքում կարևորում եմ նաև սովորողների դերասանական կարողությունները, թեկնածուների ընտրության հարցում թողնում եմ, որ աշակերտներն իրենք սեփական նախաձեռնությամբ մարմնավորեն նախասիրած կերպարներին:

Հետաքրքիր են ստացվում նաև պատմվածքի առանձին հատվածները (հերոսների գործողությունները, հայրենի բնաշխարհը և այլն) նկարների, պլակատների տեսքով պատկերող սովորողների աշխատանքները, որոնք օգտագործվում են բեմականացման

ընթացքում և կարևոր դեր են խաղում ,,Ալպիական մանուշակի,, մթնոլորտը առավել բնական ներկայացնելու գործում:

Ներկայացումն ավարտվում է Ակսել Բակունցի մասին Մարտիրոս Սարյանի խոսքերով.,,Պատմության և բնության զարմանալի ներդաշնակ համաձայնությամբ էր կյանքի կոչված նա: Մշտասևեռ, ներհուն ու թախծոտ հայացքով նա ասես հավաքել էր ուզում նորածագ արևի փրկարար զորությունը և կիզել ինչ-որ անլուծելի գաղտնիքների հանգույցը: Հավերժ սիրելի և աչքերիս առջև կենդանի կանգնած Ակսելի յուրաքանչյուր բառի ու դարձվածքի մեջ մերթ մրմնջում են, մերթ երգում Հայաստան աշխարհի երկնահաս լեռներն ու անդնդախոր վիհերը, անհուն երկինքն ու արագավազ գետերը, և այդ ամենից վեհ ու պայծառ՝ Հայաստանի հրաշք արևը,,[11]:

Այս միջոցառումը կյանքի կոչելու նպատակով սովորողների նախաձեռնությամբ ընտրվում է Նախաձեռնող հանձնախումբ, որի անդամները հաջողությամբ համակարգում են մասնակիցների աշխատանքները՝ ներգրավելով դասարանի աշակերտների զգալի մասին:

Այսպիսով՝ Ակսել Բակունցի ,,Ալպիական մանուշակ,, պատմվածքի դասավանդման սեփական փորձից ելնելով՝ կարող եմ վստահորեն ասել, որ նյութը լավագույնս կարելի է մատուցել, եթե ուսուցիչը, լավ ճանաչելով իր աշակերտներին, նրանց կարողությունները, հաջողությամբ նրանց մեջ ի հայտ է բերում ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և նախաձեռնության այնպիսի հատկանիշներ, որոնց շնորհիվ դասավանդվող նյութը հղկում է սովորողների գեղագիտական զգացողություններն ու ճաշակը և երկար մնում նրանց հիշողության մեջ:

[11] http://www.hayzinvor.am/64889.html

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական աշխատանքիս մեջ ես ներկայացրի սովորողների ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների, նախաձեռնության զարգացմանն ուղղված մի շարք դիտարկումներ, որոնք փորձել եմ կոնկրետացնել Ա. Բակունցի ,,Ալպիական մանուշակ,, պատմվածքի օրինակով: Փորձեմ ի մի բերել դրանցից առավել կարևորները եզրակացությունների տեսքով:

1. Սովորողների ինքնուրույն մոտեցումները բացահայտելու առաջին նախապայմաններից մեկը ,,Ալպիական մանուշակի,, հանդեպ ընդհանրական պատկերացում ունենալու խնդիրն է: Այն հնարավոր է ի հայտ բերել նրանց տրվող դիպուկ հարցերի միջոցով;
2. Նույն հնարանքը կիրառվում է նաև ,,Ալպիական…,,-ում բնության նկարագրությունների հանդեպ սովորողների ինքնուրույն մոտեցումներն ու վերլուծական կարողությունները վեր հանելու նպատակով, ինչի արդյունքում նրանց կողմից տրվում են բավականին հետաքրքիր պատասխաններ:
3. Սովորողների ստեղծագործական ունակությունները բացահայտելու նպատակով նույնպես մեր զրույց-երկխոսությունը տարվում է հարց ու պատասխանի հարթության մեջ՝ փորձելով կենտրոնանալ մասնավորապես նրանց երևակայության վրա: Պատասխանների ժամանակ նրանք մտնում են հեղինակային որոշակի դերի մեջ, երևակայությամբ մուտք գործում հերոսների, ապա նաև սյուժեի վերաձևակերպման նոր աշխարհ, սեփական բառերով վերաշարադրում պատմվածքի մի քանի հատվածներ, պատմաբանի, նկարչի, հնձվորի գործողությունները նկարագրում նոր տարբերակներով:
4. Առանձնակի ուշադրություն է դարձվում նաև նախաձեռնություն ի հայտ բերելու սովորողների կարողությունների վրա: Համատեղ խորհրդակցության ընթացքում որոշվում է նրանց նախաձեռնությամբ պատմվածքը վերածել

սցենարի, այնուհետև պատրաստել թատերական ներկայացում և ներկայացնել այն որպես համադպրոցական միջոցառում:

5. Նյութի դասավանդման սեփական փորձից ելնելով՝ կարելի է ասել, որ ուսուցիչը, լավագույնս ճանաչելով իր աշակերտներին, նրանց կարողությունները, կարող է զգալիորեն նպաստել նրանց մեջ ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և նախաձեռնության բազմակողմանի դրսևորումներին: